

ԳՈՐԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԻԱՅՅՈՒՄՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ստորև կքննարկվեն մասնագիտական գրականության մեջ արդիական քերականության ու գործաբանության միջև եղած փոխհարաբերությունների խնդիրը և դրա լուծման հիմնական եղանակները, դարձվածքների որոշ խմբերի բնութագրման համար առավել նպատակահարմար դարձնելու հնարավորությունը: Քանի որ, սակայն, բուն հետաքրքրությունը այս՝ լեզվական միավորների երևի թե ամենատարասեռ և տարակազմ խմբի շրջանակներում դասակարգման փորձը չէ, ինչը, ի միջի այլոց, պայմանավորված ուսումնասիրության նպատակադրումով, անկարևոր և նույնիսկ ոչ արդյունավետ կարող է լինել, որպես հետազոտության առարկա համղես են գալիս դարձվածքների այն խմբերը, որոնք կարելի է "գործաբանական տեսանկյունից նշույթավորված" անվանել և որոնք ըստ Բուրգերի սահմանման "մեկ հատուկ չափանիշի հիման վրա առանձին խմբերն են սահմանում":¹

Քերականության և գործաբանության փոխհարաբերությունների էության երևի թե ամենադիպուկ ձևակերպումն է տվել Լևանդովսկին.

"Wer als Grammatiker sich der Sprache in Funktion, der Analyse von Äußerungen also, zuwendet und dabei als Semantiker mit lexikologischem, sprachanalytischem oder auch logischem Interesse operiert, wird wiederum erkennen, daß er eher so etwas wie "die Spitze eines Eisbergs" in den Blick bekommt, wenn er sich bei der Analyse von Äußerungen auf das unmittelbar Gegebene und mit sprachlichen Operationen rasch Aufdeckbare oder mit Hilfe sprachlicher Intuition problemlos Rekonstruierbare beschränkt".²

¹ Burger: Phraseologie, Erich Schmidt Verlag, Berlin 1998, էջ 42:

² Lewandowsky: in: Pragmatik in der Grammatik, Verlag Schwann-Bagel, Düsseldorf 1984, էջ 11:

Ավելի մոտիկից քննությունը ակնհայտ է դարձնում այն փաստը, որ քերականական կարգերից շատերի նկարագրությունը դժվար է պատկերացնել կամ նույնիսկ անհնար է առանց հաշվի առնելու գործաբանական բնույթի չափանիշները: Այսպիսով, որոշյալ կամ ամորոշ հոդի ընտրությունը բացատրվում է արտաքին աշխարհը արտացոլող և այս առումով գործաբանական բնույթ ունեցող որոշյալի կամ ամորոշի քերականական կարգերով: Ժամանակի և տեղի մակբայները արդեն համակարգում կարելի է ներկայացնել միայն գործաբանական բնույթի պահմանումների (ժամանակ, տեղ) միջոցով: Քերականության և գործաբանության միահյուսումը էլ ավելի ակնհայտ է դառնում եղանակավորող բայերի կամ մասնիկների, ինչպես նաև տարբեր եղանակի բայածերի բնութագրման ժամանակ և խոսքում եղանակայնություն արտահայտելու նպատակով նշված լեզվական միավորների շարքից ընտրություն կատարելու պարագայում:

Ինչ՞ կարելի է ասել այս տեսանկյունից դարձվածքների մասին: Որքանո՞վ է նրանցում միահյուսված քերականականը և գործաբանականը: Այս հիմնահարցը պետք է մնա մեր ուշադրության կենտրոնում:

Ինչ վերաբերում է քերականության շրջանակներում գործաբանության համակարգման փորձերին, ապա այստեղ որոշակի տարակարծություն է տիրում: Այնուամենայնիվ կարելի է առանձնացնել երեք հնարավոր մոտեցում.

ա) Ելնում են քերականական նկարագրությունից և լրացնում են այն գործաբանականով:

բ) Ելնում են գործաբանական նկարագրությունից և լրացնում են այն քերականականով:

գ) Փորձում են քերականությունից դեպի գործաբանություն (կամ հակառակը) ճանապարհին միահյուսել այդ երկու բնագավառները՝ դրանով իսկ համակարգելով մի միջանկյալ բնագավառ, որտեղ քերականացմանը ենթակա գործաբանականը միացվում, համադրվում է գործաբանացմանը ենթակա քերականականի հետ:

Արդեն այստեղ կարելի է գուշակել, որ վերևում բերված մոտեցումներից առաջինը դարձվածքների նկարագրման համար քիչ արդյունավետ է:

Երկրորդ մեթոդի դեպքում խոսքը գնում է ավելի շատ հավելյալ գործընթացի, լրացուցիչ մեթոդի, քան համակարգային մոտեցման մասին: Այս պատճառով հետազայում առավելությունը պետք է տրվի մեր նպատակների համար առավել նպաստավոր երրորդ սկզբունքին:

Այսպես կոչված առօրյա-խոսակցական արտահայտությունների խումբը (Routineformeln: grüß Gott, auf Wiedersehen, meines Erachtens, ich meine, soweit ich weiß և այլն) հնարավոր է բնութագրել միայն գործաբանորեն: Վճռորոշ են այստեղ մոտեցումները դարձվածքի որոշակի հաղորդակցական իրադրության հետ կապակցվածության տեսանկյունից: Առօրյա-խոսակցական արտահայտությունների այդ յուրահատկությունը գրականության մեջ անվանում են "գործաբանական կայունություն": Այդ կայունությունը երևան է գալիս ոչ միայն որոշակի առօրյա-լեզվական իրադրության հետ դարձվածքի կապակցվածության, այլ նաև համապատասխան շրջանակներում կայուն բառային ամբողջության կոնկրետ դիրքի ծևով՝ պայմանավորված արտահայտության գործառնությով: Այսպես, օրինակ, ճաշկերույթի ժամանակ ընդունված է սեղանակցին բարի Խնդրեմք ցանկանալ. դա սովորաբար արվում է ճաշկերույթից առաջ, եթե չեն ուզում տարօրինակ տպավորություն թողնել:

Սեկ այլ օրինակ, որտեղ դարձվածքը անուղղակի խոսքային գործողության իմաստ է արտահայտում և որի օգտագործման արտալեզվական պայմանները և գործողությունների զարգացման հետագա ընթացքը կանխորոշված են պայմանականության ուժով: "Steigen Sie aus?" արտահայտությունը օգտագործվում է (լիքը լցված) փոխադրականից դուրս գալուց. որպես պատասխան հետևում է հաստատող նշան կամ ոչ պարտադիր (բանավոր կամ ոչ բերանացի) ժխտում, պարտադիր գործողություն և անցումը ազատվում է:

Առօրյա-խոսակցական արտահայտությունների խմբի ներսում լեզվական գործառնության (նույնպես գործաբանական ցուցիչ) վեր հանման միջոցով կարելի է առանձնացնել մյուս ենթախմբերը: Սրանց շարքում անմիջապես աչքի են ընկնում այն առօրյա-խոսակցական արտահայտությունները, որոնք ունեն "դատարկ" նշանակություն, այսինքն չունեն հիմնիմաստ բառիս բուն իմաստով (առարկա, դեպք, հատկանիշ, հարաբերություն), որոնց ամբողջական վերաբերական կարողությունը, սակայն, ուղղված է արտահայտության

գործառույթի վրա, ինչը համապատասխան քարացած արտահայտությունները նշանակցման հզոր գործիքի են վերածում:³ Քանի որ մենք խոսում ենք ոչ այլ, քան հաղորդակցական գործառույթների մասին, ապա դարձվածքների այս խմբի տակ մենք հասկանում ենք այն արտահայտությունները, որոնք որոշակի դեր են խաղում տեքստի ստեղծման ժամանակ՝ կապված խոսքի կառուցման եղանակի հետ: Այստեղ խոսում են զրույցի վարման կամ կարգավորման երևույթի մասին, որտեղ առօրյա-խոսակցական արտահայտությունները բազմազան գործառույթներ կարող են ունենալ: Օր.

խոսողի դերի փոխանցում/ստանձնում.

"Mann, brauchen Sie doch nicht rot zu werden, wenn ich Feuer haben will. Sind doch kein Mädchen, oder?"⁴

Շփման ձեռք բերում և պահպանում.

"Nicht wahr, Kinder? Unser Oskar ist ein guter Trommler?"⁵

Ուշադրության գրավում.

"Hier, Zucker für Euch. Ich habe, als sie schon seine Geliebte war, mit Eva Braun geschlafen".⁶

Վարանման ցուցիչ.

"Weiß im Grunde nur, daß er Joseph heißt, und als ich ihn letztes Mal sah, war er vielleicht zehn oder sagen wir, zwölfe".⁷

Առօրյա-խոսակցական արտահայտությունների մեկ այլ, գործառնական տեսանկյունից հետաքրքրություն առաջացնող ենթախումբն են կազմում այնպիսի կայուն արտահայտությունները, որոնց գործառնական նշանակությունը պարզ է դառնում առաջին հերթին համապատասխան խոսակցական գործողության շրջանակներում դերերի բաշխումը հաշվի առնելու պարագայում: Սա նշանակում է, այն, ինչը համապատասխան կառուցվածքը տեքստում ընդունելի արտահայտության է վերածում, խոսողի և լսողի միջև եղած հարաբերությունն է: Այդպիսի դարձվածքների գործառույթները կարող

³ Morris: Semiotik in: Grundprobleme der Linguistik, Verlag Burgbücherei Schneider, 1982, էջ 24:

⁴ Grass, Günter: Blechtrommel, Hermann Luchterhand Verlag 1974, էջ 29:

⁵ Grass, Günter: Blechtrommel, Hermann Luchterhand Verlag 1974, էջ 91:

⁶ Grass, Günter: Hundejahre, Hermann Luchterhand Verlag, էջ 411:

⁷ Grass, Günter: Blechtrommel, Hermann Luchterhand Verlag 1974, էջ 41:

են տարատեսակվել. իրենց բնորոշ յուրահատկությունը սակայն այս դեպքում ևս որոշակի իրադարձությունների տեսակների հետ իրենց կապակցվածությունն է: Օր.

Խոսողը պատկանում է այն անձանց խմբին, որոնք սահմանում և վերահսկում են կարգ ու կանոնը (այստեղ ծնող-երեխա հարաբերությունը):

"Fast erschrocken war ich, wußte ich doch, wie meine Familie reagieren würde. Und so war es dann auch.

"*Das fehlte uns noch, Oma im Bett, unterm Weihnachtsbaum...*".⁸

"Ja, Moment, laß mich weiterzählen, *mein Kind!*"⁹

Խոսողը չի պատկանում այն անձանց խմբին, որոնք սահմանում և վերահսկում են կարգ ու կանոնը.

"*Was ist Ihnen gefällig?*".

Քերականական տեսանկյունից առօրյա-խոսակցական արտահայտությունները հազիվ թե հնարավոր լինի սահմանել իբրև լեզվական միավորների սեղմ խումբ: Շարահյուսորեն նրանք շատ տարակազմ են: Իմաստաբանորեն նրանց ընդհանուր առմամբ հատուկ է հիմնիմաստային պակասի փոխհատուցումը իրենց իմաստի գործառության բաղադրամասի շեշտադրվածության միջոցով՝ իբրև լեզվական պատյանում նյութականացված և առօրյայի ընթացքում պայմանականացված գործողության տեսակ:

Փոխակերպման հնարավորությունների առումով զրույցներին հատուկ դարձվածքների համեմատությունը այս խմբին պատկանող այլ կայուն արտահայտությունների հետ բավականին միանշանակ կերպով ցույց է տալիս, որ առաջինները ավելի շատ են հակված փոխակերպումների: Օր.

meiner Meinung nach, nach meiner Meinung

das will ich ganz deutlich/unmißverständlich/klar u. s. w. sagen

* schönen Appetit

* Tag guten

* werd *nur* nicht frech (ճիշտ է. werd *bloß* nicht frech)

⁸ Richter/Stubel: Weihnachtsgeschichten am Kamin, Rowohlt Taschenbuch Verlag 1986, էջ 50:

⁹ Richter/Stubel: Weihnachtsgeschichten am Kamin, Rowohlt Taschenbuch Verlag 1986, էջ 68:

Պատճառը հավանաբար հետևյալն է. իրադարձությունների հետ կապակցված առօրյա-խոսակցական արտահայտությունները իրենց կայունության համար պարտական են հենց այդ կապակցվածությանը որոշակի հաղորդակցական իրադրությունների հետ և այստեղից բխող իրենց կիրառման "ավանդական" բնույթին, այն ժամանակ, երբ զրուցներին հատուկ դարձվածքների կառույցը արդեն իսկ ամենօրյա հաղորդակցման մեջ (որտեղ շատ բան է թույլատրվում) իրենց դիրքի և դերի պատճառով շարահյուսորեն և բառայնորեն փխրունացվում է:

Լեզվական պատյան են ստանում նաև այսպես կոչված շարժանշանները, ինչը յուրահատուկ դարձվածային միավորների ձևավորման պատճառ է դառնում: Ի տարբերություն համանման առօրյա-խոսակցական արտահայտությունների, սակայն, որոնց վերաբերական օբյեկտի դերում որոշակի հաղորդակցական խնդիր է հանդես գալիս և որոնք անուղղակի խոսքային գործողություն են պատկերում, շարժանշական դարձվածքները իրենց ուղղակի կերպով ոչ խոսքային գործողություններ են անվանում, որոնք արդեն իրենց հերթին անուղղակի խոսքային գործողությունների իմաստ են արտահայտում: Օր. die Stirn runzeln, die Achseln zucken և այլն:

Գործաբանականի (արտալեզվականի) և քերականականի (լեզվականի) համադրումը կարելի է տեսնել արդեն նրանում, որ լեզվական միջոցներով գործելու ունակությունով օժտված արտալեզվականը դարձյալ վերարտադրվում է բառային-շարահյուսական ձևով: Բացի դրանից, որոշ դեպքերում կապված շարժանշական դարձվածքների միջոցով արտահայտված ոչ խոսքային գործողության իմաստի հետ, խոսում են բազմիմաստության քերականական երևույթի մասին, երբ շարժանշական դարձվածքների նշանակության առաջին, կինեմատիկ (ֆիզիկական) շերտը հաղորդակցման մեջ մեկից ավելի պատկերանշանային մեկնաբանության տարբերակ կարող է ունենալ: Օր. mit dem Kopf schütteln-1) ժխտում, 2) զարմանք:

Այսպես կոչված թևավոր խոսքերի ընկալման ժամանակ, համեմայն դեպս նախնական շրջանում, վճռորոշ է ինչպես խոսողի, այնպես էլ լսողի մոտ առկա եղած գիտակցությունը այն բանի մասին, որ արտահայտությունը սկիզբ է առնում որոշակի ստույգ և իսկական աղբյուրից: Այս իմաստով

այդ արտահայտությունների օգտագործման կամ ընկալման և առանձնապես փոխակերպված կիրառման ժամանակ պետք է լինում մտաբերել ամբողջ համատեքստը և ենթատեքստը այն աղբյուրում, որտեղ համապատասխան արտահայտությունը թևավորի է "մկրտվել" (անձիք, ինչպես նաև հեռուստատեսությունը, գովազդը և այլն): Պալմը գրում է.

"Der Sprachbenutzer charakterisiert durch das Zitieren eines geflügelten Wortes eine vergleichbare Situation und stellt diese dadurch in einen kulturhistorischen Kontext".¹⁰

Ի տարբերություն այլ դարձվածքների, որտեղ վճռորոշ դեր է խաղում լեզվական գիտակցությունը, թևավոր խոսքերի դեպքում կարևոր դեր ունի ընդհանուր, արտալեզվային իրազեկվածությունը: Օր.

Wer zu spät kommt, den bestraft das Leben.

Sein oder nicht sein, das ist die Frage.

Ամփոփելով կարելի է ասել հետևյալը.

Քերականության և գործաբանության միահյուսումը դարձվածաբանության մեջ դժվար թե հնարավոր լինի համակարգել բավականաչափ միասնական ձևով, ինչպես դա ձգտում են կատարել ընդհանուր լեզվաբանության շրջանակներում: Դա կարելի է անել միայն մասնակիորեն, այն էլ ոչ ամբողջական ձևով: Այսպես, օրինակ, փոխակապակցվածություն գոյություն ունի առօրյա-խոսակցական արտահայտությունների փոխակերպման հնարավորությունների և նրանց գործաբանական առանձնահատկությունների միջև: Այն տեսակետը, թե կայուն արտահայտություններից շատերի վերաբերական բաղադրամասերը ունեն թույլ արտահայտված կամ նույնիսկ արդեն հազիվ ընկալվող ուղղակի վերաբերական գործառույթ, ճիշտ է միայն շարժանշական դարձվածքների դեպքում:¹¹ Այստեղ մեզ պակասում են "ձևական շղթայակցման տեղերը", որոնց օգնությամբ հնարավոր կլիներ սկզբնականային, վերջնականային վերականգնման կամ դերանվանացման

¹⁰ Palm: Phraseologie, Günther-Narr-Verlag, Tübingen 1995, էջ 5:

¹¹ Burger/Buhoffer/Sialm: Handbuch der Phraseologie, Walter de Gruyter, Berlin-New-York 1982, էջ 105:

միջոցով դարձվածքը կապակցել համատեքստի հետ: Եթե այլ դարձվածքների պարագայում դա բացատրվում է հիմնականում հատկաբանացման բարձր աստիճանով, ապա շարժանշական դարձվածքների դեպքում պատճառը կարելի է տեսնել ամենօրյա գործածությամբ պայմանավորված այդ դարձվածային միավորների կայունության մեջ: Դարձվածքը այստեղ հարաբերակցվում է ենթատեքստի հետ և կցվում, շղթայվում է նրան որպես մի ամբողջություն: Օր.

Er zuckte die Achseln, die bei ihm ziemlich muskulös waren. Diese Achseln...

Als er den ganzen Blödsinn hoerte, zuckte er nur mit den Achseln.

Գործն այլ կերպ է թևավոր խոսքերի և մասնավորապես առօրյա-խոսակցական արտահայտությունների դեպքում, որոնք ամենևին էլ չեն հակասում տեքստի շղթայակցման ընդունված միջոցներին: Օր.

Sein oder nicht sein? Das ist die Frage, die zu beantworten ist.

Meiner Meinung nach... *Diese Meinung* basiert auf folgenden Tatsachen...

Սակայն, ինչպես էլ դա լինի, դարձվածքները ընդհանրապես երբեք հանդես չեն գալիս անկախ ձևով, այլ՝ միշտ ենթատեքստի մեջ ներհյուսված: Դա կարևոր դեր ունի դարձվածային միավորների բնութագրման ժամանակ՝ ինչպես համակարգում, այնպես էլ տեքստում: